

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՓՈՒՆԿԱՅՏԱՆԻ

Նոր և աշխարհածանօթ քաղաքա-
կան մեծ դիպուածով պատճառած դրա-
մական տեղափոխութիւնն 'ի փռան-
կաստանէ 'ի Գերմանիա, 5000 միլիոն
ֆրանգաց ոսկեղէն գումարի կամ զան-
գուածի մը, ամենուէն միտքը գրաւեց
պէսպէս զգացմամբ, թերեւս և կրքով,
և հասարակաց իմն զարմոցմամբ
փռանկաց հարստութեան և ճարտա-
րութեան վրայ, որ այսպիսի ծանր և
բազմազուսմար տոյժ մը կրցան վճա-
րել քիչ տարուան մէջ։ Ասկէ հետեւե-
ցան հետաքննութիւնք փռանկաց եր-
կրին բնական հարստութեան կամ
բերոց վրայ, որ են սեփականազոյն
հարստութիւն և զօրութիւն ժողովրդ-
դեան. և ահա նոր հրատարակուած
գրքոյկ մը կարեւոր տեղեկութիւններ
կընծայէ յայսմ մասին, ուսկից կը քա-
ղեմք յետագայն։ Ասկէ տասը տարի
մ'առաջ (1862) կայսերական պետու-
թիւնն պատուիրած էր մանրամասն
տնտեսական վիճակագրութիւն մ'ը-
նել փռանկաստանի երկրին բերոց,
նշանակելով նախ անոր տարածութիւ-
նը՝ որ էր այն ատեն 54,305,100 ար-
տաշափ (եկտար), որոց գրեթէ ճիշդ
կէսն՝ 26,568,624 եկտար մշակելի գե-
տին. 9,168,000 անտառք. 6,506,000
արօտք, երէցք, խարձուք. 5,020,000
մարգք. 2,320,000 այգիք. 4,680,000
ծառք տնկեալք, ջուրք, ճանապարհք,
չէնք, և այլն։ Մշակելի երկրին երեքին
երկու մասն՝ սեփականուած է սննդա-
րար արմտեաց, որ են՝ ցորեան, մայիզ,
գարի, կորեկ, և այլն. երրորդ մասն՝
գետնախնձորոյ, արուեստական մար-
գաց, և ճարտարութեան կամ արուես-
տի պիտանացու բուսոց, ինչպէս են
իւղաբեր բոյսք, կանեփ, ճակնդեղ,
թապաք, ներկի բոյսք, և այլն։ Այս
ամենայն բուսոց և բերոց տարեկան

արժէքն միջին հաշուով՝ էր իբրեւ 10
միլիար. այսինքն.

Ցորեն	2,917,000,000
Այլ և այլ արմուղք	1,958,000,000
Խար (խոտ)	1,890,000,000
Այգիք	1,387,000,000
Խաւարոք	548,000,000
Գետնախնձորք	534,000,000
Ճակնդեղ	84,000,000
Մետաքս	78,000,000
Իւղային և Հիւսածոյ	
Բոյսք	283,000,000
Այլ և այլ բերք	100,000,000

Կենդանական հարստութիւնն կամ
բերքն յիշեալ 1862 տարւոյն՝ էր իբրեւ
60,000,000 հաւեղէն և 54,000,000
չորբոտանի. յորս 30 միլիոնի չափ բըր-
դոտ կենդանի, 12,800,000 եղջերաւոր,
1,727,000 այծ, 6 միլիոնէն աւելի խոզ,
3 միլիոնէն քիչ պակաս ձի, իբր 400,000
էշ և 330,000 ջորի. 2,427,000 ալ մե-
ղուի փեթակ կը համրուէր։ Ընտանի
կենդանեաց տարեկան եկամուտն կը
հաշուէր 4 1/2 միլիար, յորս 1 միլիար և
66 միլիոն՝ ձիոցն էր, եղջերաւոր կեն-
դանեաց՝ 2410 միլիոն, ասորաբերաց՝
560 միլիոն, խոզից՝ 240 միլիոն, այ-
ծից՝ 24 միլիոն, գրաստուց՝ 128 միլիոն,
մեղուաց մեղրի և մոմից՝ 32 կամ 33 մի-
լիոն, վաճառուած հաւեղինաց՝ 100 մի-
լիոն։

Անգործարան բերոց կամ հանքաց
նշանակուած արժէքն յիշեալ 1862
տարւոյն էր՝ դետնածուղ 118,000,000
ֆրանգաց, իսկ ուրիշ հանքաց և աղից
իբրեւ 30,000,000։ Յայտնի է որ փռան-
կաստան ինչուան հիմա բաց յերկա-
թոյ և 'ի գետնածոյոյ զլխաւոր հանք
կամ բովը չունի, թէ և գտուին տեղ
տեղ նաև արծաթ, պղինձ, անագ և կա-
պար, այլ քիչ գործուած են, զանա-
զան պատճառաւ։ Բնական ճարտա-
րութեան կամ արուեստից բերքերէն
դուրս երկաթուղեաց թէ բոլոր թէ կէս

շինուածներուն բերած չափն յամին 1869 եղաւ իբրեւ միլիար մը :

Արդ այս ամենայն բերք երկրի կը բերեն փռանկաց ամեն տարի՝ առ նուազն 16 միլիար, իսկ 'ի յաջորդութեան թերեւս մինչև 'ի 20 միլիար, զատ արուեստից կամ ձեռագործաց շահէն, որոյ վրայ մանրամասն նոր ծանօթութիւն չունենալով առ ժամանակս չառնեմք :

Իսկ փռանկաստանի ամենամեծ հարստութիւնն որ է ժողովուրդն՝ այն 1862 տարին կը համարուէր 37,450,000. չորս տարի ետեւ յամին 1866, որ է վերջին աշխարհագիր յառաջ քան զպատեւազմն՝ 38 միլիոնէն քիչ մ'աւելի գտուեցաւ թիւն. իսկ յետ պատեւազմին և կորըստեան Ալսաս և Լորեն գաւառաց, անցեալ տարի (1873) գտաւ 36,103,000 : Այս ետքի թուականիս Բարիզու բնակչաց թիւն էր 1,852,000, Լիւնի 325,500, Մարսիլիոյ 313,000, Պորտոյի 194,000, Լիլի 158,000, Դուլուզի 125,000, Նանդի 118,000, Սէնդ-Լէօնի 110,000, Ռուանի 102,000. Մնացեալ քաղաքաց մէջ 100 հազար բնակիչ ունեցող չկայ :

ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

Ի ՀՆԴԿԱ-ՉԻՆԱՍՏԱՆ

Վաղդիա 'ի սկզբանէ 'ի վեր միշտ հետամուտ եղած է աշխարհագրական ուղեորութեանց և հետազոտութեանց ուրուն մեծապէս նպաստամատուց եղաւ և լուսավորութիւն օժ իր թագաւորութեան ժամանակ. իսկ Նպրոցին և երբ Նեքիպոս պատերազմի կ'երթար, տարաւ հետն և շատ իմաստուններ, որպէս զի իր արշաւանաց ժամանակ քննեն և 'ի լոյս հանեն փարսոնեանց վաղեմի երկրին գաղտնիքն ու հրաշալիքը :

Նպրոցէն Գ Նախանճորդ իր հօրեղորոյ յամենայնի, չուզելով և յայսմ յետամնաց ըլլալ քան զինքը, փափաքեցաւ հե-

տազօտել տալ Հնդկա-Չինաստան մեծատարած աշխարհին զաղդիական նոր գաղթականութեանց ամեն երկիրները. և 'ի գլուխ տանելու համար զայն ուղեորաց ընկերութիւն մը կազմեց, որոց յանձնեց 'ի վեր ելլել դէպ 'ի Վայ-Քուսկ գետու, քննել անոր գետակից ճիւղերը, զննել ափանցը վրայ տարածուած ժողովուրդները, անոնց բարքը, լեզունին, ապրանաց միջոցները, վաճառականական յարաբերութիւններն, և ապա մտնել մինչև 'ի Չինաստան, և գետոց մէջ ճիւղովայն կայսերութեան հիւսիսաւորդման և միջնակորդման աշխարհաց բերքերը ջանալ բերելու մինչև Վայկոնի գաղդիական նաւամատուցը : Այս խնդրական երկուքը պիտի քննէին 'ի մասնաւորի նոյն աշխարհաց բուսաբերութիւնը, երկիրն և բնութեան երեւոյթները, բոլորովին անծանօթ էւրօպացւոց. ուրիշ մ'ալ պիտի նկարէր տեղացւոց դէմքերն ու սովորոյթքը, անսովոր տեսարաններն և գեղեցիկ շէնքերը :

Շատ մեծ ու դժուարին էր, ինչպէս յայտնի է, այս խնդրական գործը կամ ձեռնարկութիւնը. ուստի տէրութիւնն իր կողմանէ ամեն կարելի դիւրացուցիչ օգնութիւններն բնելու համար, տուաւ անոնց երկու թարգման, չորս գաղդիացի և ինն տեղացի դիւնուոր 'ի պահանորդ ուղեկցութիւն. քանի մը հարիւր չիւ գինի և գինօղի, պաշարոյ ու պահեստի զանազան տուփեր, կսկուծ հաց և ալիւր, քանի մը զոյգ հրացան, խաղալիք, կարողներ, որպէս զի ընծայեն կամ փոխանակեն տեղացւոց հետ, և զրամ :

Այս կերպով պատրաստուած ճամբք ինկան, և իրենց առաջին քննութեան տարակայն եղաւ վաղեմի պետութեան մը մնացորդքը, այն է Անկորայի աւերակները 'ի Գամպոն. կուրքեր ու մեհնաններ, պալատներ ու շէրիմներ, հոյակերպ և հսկայածն շինուածներ և զոգնակներ, որք կը վկայեն թէ ժամանակաւ զորաւոր տէրութիւն մը կ'իշխէր այս կողմանց, իրացնէ երբեմն հարուստ և զորաւոր էր Գամպոնի աշխարհը, բայց իր մերձաւորքը Սիամը, Պիրմանը և Սինամը պատերազմելով հետը՝ աւաղակեցին իր հարուստ և գեղեցիկ նաւաները. և ապա առ սակաւ սակաւ անընթացաւ Գամպոն և անմարդացաւ արքայանիւտ քաղաքը. մեհնանցը մէջ խոտեր բուսան, և զանազան տունկեր իրենց արուստ կամաց կամաց սեանց և կամարաց մէջ թափանցելով՝ քակեցին և աւերեցին հոյակապ շինուածքը : Անկորայի աւերակներն ամեն հնախուրդից և պատ-